զերծան յայնմ պատուհասէ. և զայս լըւեալ վէզիրն ի լուռ եղև յայնմ օրէ։

Կիրակի Թէոդորոսի (15 Փեբր.)։

Դշիս[1]) և Եշիս (18 և 19 Փեբր.) պատասխանի գրեցի, ոչ գնալով ի խանութ, թղթիցն Վարդապետին (Եղիազար), որ Եշի օրս գնաց սային։

Պուրսացիք թուղթ ուղարկեցին քաղաքացոյս Զշի օրս (20 Փեբր.) թէ Մուղնեցին աստ կամի գալ, զի՞նչ ասէք։

Կիրակի Անառակի (22 Փեբր.). ի մօտ Գաբրիէլ վարդապետն գնացի, և բազում խօսս եղեալ ի միջի մեր և բազում խնդրուածովք հայցեաց թէ Զի և դուք մի ճար գտեալ զիս հանիցէք աստի։

Եւ Բշի օրս (23 Փեբր.) Պուրսացոց թղթին պատասխանի գրեցի և վասն Մուղնեցուն։

Եւ աւուրքս վէզիրն թէ որչափ ղօլ կայր չէնկոյ՝ զամենեսեան ի թին տվաւ, բայց միայն ճէվահիր ղօլին պրծաւ յառաջագոյն փախչելովն, այլ զամենեսեան որ եգիտ, ղօլ ղօլ գնոսա ի թին ետուր։ Բշի օրս զթուղն հանեցին թագաւորին, իբր թէ ուղղեցաւ գնալն ցամաքաւ ի պատերազմ։

Եւ երեկոյիս Երուսաղէմայ Ստեփանոսն եկաւ հանդերձ թղթիւք. և ի մէջ թղթիցն այս էր թահրիր, զի զմի դուռ Ծննդեանն Քրիստոսի առեալ և ի վերայ նորին պատարագ արարեալ և ԻԱ. կանթեղ լուցեալ անդ, և զտեղ Հապաշիցն զամենայն և զկանթեղս նոցին զամենայն առեալ է և տիրեալ է Եղիազար վարդապետն մեծաւ դատաստանաւ և բազում ամբոխիւ Ղազայ փաշայիւն և Երուսաղէմայ փաշայիւն և մուֆտիւն՝ Հիւսէմզատէիւն եւ այլ քաղաքի արամբքն[2]), աստի առեալ խէթիշէրիֆովն ձեռամբ Պոյնուէկրի վէզիրին։

1) Զշիս. 2) արամքն.